# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**20.04.2026թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/31 գնման պայմանագրի**

ք. Երևան «26» «05» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Բանդուրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 20.04.2026թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/31 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը և **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

***1.Համաձայնագրի առարկան***

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների** գինն ավելացնել *8 392 649 (ութ միլիոն երեք հարյուր իննսուներկու հազար վեց հարյուր քառասունինը) ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ-ն*, և Պայմանագրի 5.1 կետով սահմանված ընդհանուր գինն սահմանել **107 992 649 (մեկ հարյուր յոթ միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար վեց հարյուր քառասունինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

1.2 Հաստատել սույն համաձայնագրի ծավալաթերթ նախահաշիվը՝ համաձայն N 1 հավելվածի:

1.3 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը ավելացված գումարի մասով՝ համաձայն N 2 հավելվածի:

***2. Այլ պայմաններ***

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է 2/երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | Հասցե՝ Պարոնյան 21/4 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Բանկ՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900012213626 | Հ/Հ 2500011554730100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 02917998 |
| Վ.Պապիկյան ____________ (ստորագրություն) Կ.Տ | Հ. Բանդուրյան ____________ (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված թիվ 1
20.04.2026թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/31 գնման պայմանագրի
« 26 » « 05 » 2026թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆՅԱ ԾԱԾԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

| | Աշխատանքի անվանումը | Չ/Մ | Ծավալ | Միավորի արժեք /հազ. դրամ/ | Ընդհանուր / հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բիտումով կամ բիտումային էմուլսիայով ավտոմատացված մշակում 100 և ավել քմ փոսերի դեպքում 4,12տ/1000քմ՝ ավտոգուդրոնատորով | տ | 28.444 | 291.8 | 8299.959 |
| **Ընդամենը** | | | | | **8299.959** |
| **ԱԱՀ** | | | | | **1659.992** |
| **Ընդամենը /ներառյալ ԱԱՀ/** | | | | | **9959.951** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900012213626
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ
Հասցե՝ Պարոնյան 21/4
Բանկ՝ «Արմսվիփբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500011554730100
ՀՎՀՀ 02917998

Հ. Բանդուրյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
20.04.2026թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/31 գնման պայմանագրի
« 26 » « 05 » 2026թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231187/11 | Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ | ... | ... | ... | .... | 41963330 | 41963330 | 62944490 | 62944490 | 62944490 | 83926449 | 83926449 | 83926449 | **83926449** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | Հացեք՝ Պարոնյան 21/4 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Բանկ՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900012213626 | Հ/Հ 2500011554730100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 02917998 |
| Վ. Պապիկյան ______ (ստորագրություն) Կ.Տ. | Հ. Բանդուրյան ______ (ստորագրություն) Կ.Տ. |

«ՈՒՐԲԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» "УРБАН ДЕВЕЛОПМЕНТ" "URBAN DEVELOPMENT" 02917998

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

«25» 05 2026 թ. N 4648/10/5

**ԵՐԱՇԽԻՔ N 26-0461**
**(որակավորման ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/31 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՌՈՒՐԲԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/31 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 2,987,990.00 (երկու միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/31 ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 14/05/2027 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ sergey.simonyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/31 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.
   3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

/ Գործադիր տնօրեն — Գևորգ Մաչանյան

ARMSWISSBANK CJSC «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ CUSTOMER SERVICE 02574955

info@armswissbank.am
www.armswissbank.am

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10
Հեռ.՝ +374 60 757 000, +374 11 757 000
Ֆաքս՝ +374 10 529591

«25» 05 2026 թ. N 4647/10/5

**ԵՐԱՇԽԻՔ N 26-0460**
**(պայմանագրի ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՈՒՐԲԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/31 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,000,000.00 (մեկ միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/31 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15/05/2028 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի իրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ sergey.simonyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/31 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

/ Գործադիր տնօրեն Գնորգ Մաչանյան

"ARMSWISSBANK" CJSC "ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ" ՓԲԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ CUSTOMER SERVICE 02574955

info@armswissbank.am
www.armswissbank.am

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10
Հեռ.՝ +374 60 757 000, +374 11 757 000
Ֆաքս՝ +374 10 529591